


ԲԱՅԵՎԵՎԻԿԻՎԱՆ
ՅԵՐՐՈՐԴ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆ

52.

Քյուղամենի Ա. Առաջան

ԲԱՄԲԱԿԻ. ԳԱՐԵԱՆԱՑԱՆԻ
ԱԳՐՈԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ

1982

ՅԵՐԵՎԱՆ

11.02.2013

19.11.7

24 SEP 2010

633.5

Ա-57

ՀՅԱՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂՑ 8ՆՏԵՍԱԿՈՆ ՀԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ
Խ 53 (153) ԳՐԱԴԱՐԱՆ Խ 53 (153)

ԳՅՈՒՂՑ ԲԱՐՄՐԱԿԻ ԱՆԿՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏ

Բամբակադործության զարգացումն արագացնելու մասին Համկոմկուսի կնտկոմի պատմական վորոշումը կենապղոծելու համար յերկու տարուց ավելի մզկող պայքարը մեղ հնարավորություն տվեց ընդհուպ մոտենալու բամբակի անկախության հարցի լուծմանը :

Մինչ այդ Միության սահմաններում ստացվող բամբակը բավարարում եր մեր տեքստի արդյունաբերության պահանջմանը մասը միայն, իսկ $\frac{1}{3}$ -ը մենք հարկադրված եյինք ներմուծել արտասահմանից, այդ նպատակով տարեկան ծափուելով 150 միլիոն ռուբլի վուկով :

Մախուելով այդպիսի խոչոր գումար բամբակ ներմուծելու համար, մենք մինույն ժամանակ հարկադրված եյինք սահմանափակել մեքենաների ներմուծումն արտասահմանից : Իսկ այդ նշանակում ե, վոր մենք զլկվում եյինք մեր գործարանները կարճ ժամանակամիջոցում սարքավորելու հնարավորությունից, վորպեսզի նրանք գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերակառուցման համար արտադրեյին անհրաժեշտ քանակությամբ տրակտորներ, գութաններ, շարքացաններ և գյուղատնտեսական այլ գործիքներ :

Ահա թե ինչու ամեն մի կոլտնտեսական, ամեն մի աշխատավոր միջակ, չբավոր գյուղացի պիտի գիտակցորեն պայքարի բամբակի տնկախության համար, պարզ համոզված լինելով, վոր ազատվելով բամբակ ներմուծելուց, մենք հնարավորություն կունենանք լայնացնել մեր մեքենաշինական արդյունաբերության արտադրությանը՝ ավելի շատ սկզբանական տրակտորներ և այլ մեքենաներ ստանալու համար

Պահպատի տպարան
Հքոտարակ. № 2105
Գլուխիս 7145 (բ)
Պատվեր 682
Ցիրոֆ 6000



Խմբ. 2. Ք. ԱՄՈՎԱՆ

Հանձնված և արտադրության 28/II 1933 թ. Ա. Յ. Յ.
Տղագրված և 1932 թ.

106/5
35460

5941

և գրանով ավելի կամբացնենք իր իսկ կողմանունականի և չքավոր ու միջակ գյուղացու ռենտենությունը:

Բամբակի անկախության խնդիրը լուծելով, Ֆիտանահանակ մեր տեքստի արդյունարերության համար ժենք ստեղծում ենք հումքի ուժեղ բազա և նրա արտադրությունն ել ավելի ծավալելով, ապահովում ենք աշխատավոր լայն մասսաների մատակարարումը:

Բամբակի ցանքի տարածություններն ընդարձակելու, բամբակագործության տեխնիկական վերադիման և մեքենացման բնագավառներում, վերջին տարիների ընթացքում մենք ձեռք ենք բերել վճռական հաջողություններ:

Բամբակագործության ասպարիզում ձեռք բերած նվաճումները՝ մեզ հնարավորություն են տալիս Միության մեջ բամբակի ցանքերի տարածությունը 1932 թվին հասցել 2 միլիոն 437 հազար հեկտարի՝ 1931 թ. 2 միլիոն 137 հազարի դիմաց։ Այս ասպարիզում կոլտնտեսությունների տեսակաբար կշռը 1931 թվին հասել եր 64 տոկոսի՝ 1930 թվի 39 տոկոսի դիմաց, ստեղծված է բամբակացան խոշոր խորհությունների հուժկու ցանց, վլորոնք հանդիսանուած են բամբակի կատարյալ «սոցիալիստական դորժարաններ»— զինված ազգութեանի նորագույն արտադրական միջոցներով։

Կարճ ժամանակամիջոցում զգալի չափով առաջադիմել ե բամբակագործության մեքենացումը։ 1931 թվին բամբակացան հիմնական շրջաններում կազմակերպվել են 157, և այս տարվանից հիմնվուած են 74 նոր ՄՏ կայաններ։

Այդ հաջողությունները ձեռք են բերված գյուղի կառավալիստական տարրերի բոլոր մնացորդների գեմ գասառ կարգային անողոք պայքար մղելով, ինչպես և անհաշտ պայքար ծավալելով այդ մնացորդների իզերի արտահայտիչ գաշնակ հակահեղափոխական թափթփուների զեմ, Հաղթահարելով դասակարգային թշնամու կատաղի գիմագությունը և հայտաբերելով ու ջախջախնելով բամբակա-

գործության զեկավար մարմիններում բուժ դրած վճառութարական խմբավորումները։ Հիմնովին պարտված են նոր շրջաններում բամբակագործության զարգացման անկարելիության մասին յեղած թեորիաները (Աւկրայինայի, Հյուսիսային Կովկասի և Ղրիմի վերաբերյալ)։ Այդ շրջաններում բամբակի ցանքի տարածությունը 1932 թվին սահմանված է 406 հազար հեկտար՝ 1931 թվի 354-ի դիմաց։

Համկոմկուսի հենտկոմի վորոշման համաձայն, Անդրկուպկասը յերկրորդ հնդամյակում պետք է զանա Խորհրդական Միության բամբակագործության 2-րդ հզոր բազան։ Բամբակի ջրովի ցանքերի տարածությունն Անդրկոմկասում 1932 թվին պետք է հասնի 291 հազար հեկտարի, վորից 233 հազար Անդրեյանում, 30 հազար Հայաստանում և 28 հազար Վրաստանում։ Բացի դբանից, անջրդի բամբակ Աղբբեշանում պիտի մշակվի մինչև 4.000 հեկտար, յեղիպտական բամբակ՝ մինչև 7 հազար, իսկ սածիլավոր բամբակ՝ ամբողջ Անդրկոմկասում՝ 2.400 հեկտար, վորից Հայաստանում՝ 500 հեկտար։

Ուժեղացմում է բամբակագործության մեքենացման բազան։ այդ նպատակով Անդրկոմկասի բամբակագործական շրջաններում կաղմակերպվում են 9 նոր ՄՏ կայաններ։

Բամբակագործության ասպարիզում խորհրդային էջանության ձեռք բերված այս նվաճումները հիմնականուն կանխորշում են բամբակագործության հետագա զարգացման ընթացքը։ Սակայն այդ զարդացման տեմպերն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տեղի ունեցած խոչոր թերությունները՝ հետագայում դրանք հաջողությամբ վերացնելու համար։

Այդ թերությունները հիմնականում հանդիսացել ե բամբակի պլանի վորակական ցուցանիշների և մշակման ժամկետների թերակատարումը։ Այդ մոմենտների վրա մենք կանք կառնենք, գծելով միաժամանակ նրանց հաղթահարելու, վերապնելու ուղիները։

Յամ ուզգությամբ Համեկոմիութիւն կենակումն իր 1931 թ.
Հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ տվել և անյերկրայելի դիս-
ընկառիք ցուցումներ, արձանագրելով՝ «Անդրկոմիկասյան
կուսկազմակերպությունները, մանավանդ Աղքաքչանը, ի-
րենից ուշադրությունը պետք է նվիրեն գլխավորապես բամ-
բակի հետադատ, տարածմանը, աշխատելով վոչ միայն ըն-
դարձակել, բամբակի ցանքի տարածությունները, այլև
մշակման վրաբակը վճռականապես բարելավել, ցանքը, մշա-
կումը և համարը ժամանակին կատարել, բերքատվությու-
նը բարձրացնել, բամբակաղործության զարգացման բոլոր
աշխատանքներում յենելով այն բանից, վոր Անդրկոմիկասը
յերկրորդ հնդամյակում պետք ե դասնա Խորհրդադին Միու-
թյան բամբակաղործության յերկրորդ հոլոր բազան»:

Բամբակաղործության այժմեյական այս խնդիրների
հաջող լուծումը և կենտկոմի դիրեկտիվի կենսագործումն
ապահովելու համար մենք բայց կեկան յերբորդ գարնանա-
ցանը ոկտօք և դիմավորենք՝ կենտրոնացնելով մեր շրջանա-
ցին կաղմակերպությունների ուշադրությունը կուտնուու-
թյունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական
ամրապնդման, ՄՏ Կայանների նախագատրաստական աշ-
խատանքների, չքաջոր, միջակ աշխատավորության և կոլ-
տնտեսականների ուժերը կազմակերպելու և բամբակաղոր-
ծության առկա բոլոր ուժերն ու միջոցները լրիվ սպազոր-
ծելու վրա, նշանաբան ունենալով՝ բայց կեկան յերբորդ
զարնանացանի քանակական ցուցանիշներն առահովելով
հանդերձ, ապահովել նաև վրակական բոլոր ցուցանիշների
առավելագույն կատարումը:

ՀԱՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բերքի բարձրացման գլխավոր պայմաններից մեկն ե՝
հողի կանոնավոր մշակությունը: Բերքը հավաքելուց հետ
հողն ամրանում, պնդանում ե: Սերմի ծլելու համար ողին ու

խոնավությունը բացակայում են այլպիսի հողերում, ուս-
տի անհրաժեշտ և համարատափան մշակություն:

Ամենալավը հենց աշխանից, բերքը հավաքելուց հետո
այդ հողերը վարելն ե, վորը կարելի յե անել թե՛ արակտո-
րով և թե՛ քաշող ուժով՝ գութանով: Նախ՝ հողը վարելին
հողի վերին շերտերի հետ կորում ենք նաև մոլախոտերի
արմատները և հողը շուռ տալիս: Աշխան և ձմրան ընթաց-
քում այդ արմատներն արելի, քամու և ցրտի աղդեցության
տակ չորանում և վոճաչանում են: Այդպիսով, աշխան հերկը
բամբակի հողերը վորոշ չափով աղդատում ե բամբակի ամե-
նավոխներիմ թշնամուց՝ մոլախոտերից:

Եերկրորդ՝ իթե հողն աշխանը մնում է առանց վարե-
լու, հետևապես և պնդանում է: Այդ պնդացած հողի վրա-
յով՝ ձյան ջրերը և անձրևաջրերը, առանց հողի մեջ խորը
ծծվելու, անարգի կերպով հոսում են և անցնում, իսկ հողի
մեջ յեղած խոնավությունը հեշտությամբ գոլորշիանում ե՝
պնդացած հողում առաջացած մաղանոթների միջոցով: Այդ
պատճառով ել աշխան չվարած հողերն անընդունակ են սեր-
մի ծլելու համար անհրաժեշտ խոնավությունը կուտակելու
և պահպանելու:

Բոլորովին այլ պատկեր ե ներկայացնում աշխան վարած
հողը՝ նախ՝ այլպիսի հողը հարուստ և լինում ողով: Յերկ-
րորդ՝ նա հողաքում և ձմրան խոնավությունը, կլանելով
վիրացած շերտի միջով թափանցող ջրերը: Այդ խոնավու-
թյունը նա պահպանում է վարած և վիրացրած հողաշեր-
տում՝ ջուրը գործիքացնող մաղանոթների քայլայլած լի-
նելու հետևանքով, և ներքին շերտերից բարձրացող ջուրը
կուտակվում և վերին շերտում: Այսպիսով, պարզ ե, վար
աշխանավարի միջոցով մենք պայքարում ենք մոլախոտերի
դեմ և միաժամանակ սերմի ծլելու համար ստեղծում ենք
նորաստավոր սղային և ջրային պայմաններ, հավաքելով և
խնայելով ձմրան ջրերը, մի հանդամանք, վոր կարեռը նշա-
նակությունի մեր սուկավաջուր դաշտույին չբջաների

համար, Վերջապես, ծանր (կավային) և շաղկապված հողերը, չիժանները, աշնանավարից հետո, անձրևների, ձըթումն քամիների և սառնամանիների աղդեցության տակ փչպում և փխրանում են, հեշտոցնելով գարնան աշխատանքները:

Վորաբես 1932 թվի պլանի կատարումն ապահովող ագրոձեռնարկում, մեր բամբակացան շրջաններում աշնան վարութիւնի արվեր 15.000 հեկտար, սակայն ՄՏ Կայանների թույլ աշխատանքների և մասամբ վերահաս ձմռան պատճառով այդ առաջադրանքը թերակատարված է; Բւստի, վերոհիշյալ պլանը կատարելու համար անհրաժեշտ է դիմել վաղ պարնան վարի՝ ժամանակին ցանքի աշխատանքներն ապահովելու համար։

Աշնան վարը նպաստում է բերքի բարձրացման, նաև հարավորություն և տալիս վարնանը, առանց ուշացումների, ժամանակին կատարել ցանքը։ Բոլորին ել հայտնի յէ, թե ցանքը ժամանակին կատարելը վորքան մեծ նշանակություն ունի։ Ամեն մի ուշացած որը զդալիորեն իջեցնում է բերքատվությունը։

Բացառիկ է աշնանավարի վորակի գերը բերքատվության բարձրացման համար։ Վատ կատարած հերկը և առանձարակ հողի նախացանքային վատ մշակությունը մերժի ծիլու համար ստեղծում են աննպաստ պայմաններ։ Ծիլերը նիշում են անհավասար և նուր։ Ինչքան ել աշխատենք հետագում այդ բացը լրացնել լավ մշակութամբ, այնուամենայիլ, անխուսափելի յէ ցածր բերքատվությունը։

1931 թվի գարնանցանի ցածր բերքն այդ և ապացուցում, վորի հիմնական պատճառներից մեկն այդ տարվա վարնան և աշնան վատորակ վարն եր։ Բատ շրջանների կատարած մի շարք հետազոտությունները տույլի են այդպիսի անվարակ վարի պատճենը։

Տրակտորագույն վար անողները դաշտի գլխամասներում թույլ են չփորսությունը հողերի մեծ արածությունները, ինչպիս և

վարի յերկայնքով, ակոսների միջև, չվարած և չուր չողմած, հողով ծածկված հողաշերաբը, վորոնց վրայի մոլախոտերն այս պատճառով չեն վոչնչացվել։ Սրա հետևանքը յեղել և այն, վոր բամբակը ծլելուց հետո, դաշտում զգալի տարածություններ մնացել են բաց, ծածկված սոսկ մոլախոտերով։

Անբավարար է յեղել նաև վարի խորությունն այն առարկան, վոր շատ տեղերում վիխրացրած հողը չի բավարարել նույնիսկ մարկոս անելիս՝ խմբեր կազմելու համար։ Բացի դրանից, մի շարք տեղերում գարնանավարը կատարվել է ցեխոտ հողերում, դաշտում առաջացնելով խոշոր, ամբազած ցեմենտացած հողակոշտեր։

Այս բոլորը հետևանք է ՄՏ Կայանների թույլ դեկավարության, վարի աշխատանքներին ՄՏ Կայանների և կուտնահետությունների տեխնիկական հսկողության բացակայության։ Այդ կազմակերպությունները միանգամայն աչքայի ենին արել աշխատանքի վորակի խնդիրները։

Հաճախ անփորձ և անվորակ տրակտորիստները, ընկերով քանակի հետևից, վշացրել են աշխատանքի վորակը։ ՄՏ Կայանները վարը կատարել են ցեխ ժամանակ, կամ գեշերները՝ առանց համապատասխան լուսավորության։ ՄՏ Կայանի աշխատանքների մեջ տիրել ե դիմազրկություն, վորի հետևանքով տրակտորները հաճախակի միշտանալով։ Վարի անհնայեռում շրջանում յերկար ժամանակ յեղել են նորոգման մեջ։ Նորոգումները կատարվել են թերի, և այս պատճառով արակտորային պարկը չի ողտագործվել իր լրիվ կարողությամբ։

1932 թ. գարնանացան անցյալ տարվա թերություններից պահելու համար անհրաժեշտ է, վոր ՄՏ Կայանները վերակառուցեն իրենց աշխատանքները՝ այս տարվա վարի պահնը թե՛ քանակով և թե՛ վորակով լրիվ կատարելու նշանաբանով։

Վարի վարակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ

և սռելծել հողի խոշոր մասսիվներ, միացնելով առանձին հողամասերը, վերացնելով միջնակները, վորպեսդի տրակտորը կարողանաւ ալզատ պատույաներ կատարել դաշտում և խուսափել հողամասերի գլուխները չվարելուց: Խոշոր տարածությունը կհերկվի լրիվ և հավասար, բայց տեղեր չեն լինի, ցանքի մեքենացման դեպքում ել հնարավոր կլինի ցանքը կատարել տրակտորով, և դաշտը հավասարապես կծածկվի բամբակով, առանց բացուտների, քաշալ տեղերի և, հետեւապես կտա մեզ մեր ցանկացած առատ բերքը: Այսպիսի մասսիվներ ստեղծելու աշխատանքները պետք է կազմեն կոլտնտեսությունների և դյուզական կաղմակերպությունների ուշադրության կենտրոնը գարնանավարի նախապարաստման ընթացքում: Մի խնդիր ել վարի նախական աշխատանքների ընթացքում չպետք է աչքաթող անել, այդ հողերի դասակարումն ե: Բրիգադիբը պետք է նախորոք պարզի, թե ինչպես պետք է տանել տրակտորը: Այս աշխատանքը մտածված կատարելու դեպքում վոչ առուներ կիշխան, վոչ ել հողամասի գլուխներ կմնան առանց վարելու:

Պետք է զդուշանալ շատ խոնավ հողեր վարելուց: Այս դեպքում, ինչպես վերը ասացինք, վարն առաջացնում է այնպիսի ցեմենտացում, վորի հետեւանքով ցանքը ապարագուն և անցնում, սերմերը ծիլ չեն տալիս, կամ շատ չնշին քանակով են ծլում: Հետագա կրկնացանն ել չի ողնում: Դրությունը չի փրկում նաև այդ հողի հետագա մշակումը, ուստի բամբակացանները չպետք է տարին վարի պլանի ձևական կատարումով և վարեն շատ խոնավ հողերը:

Այս հանգամանքը մեկն է այն գլխավոր մոմենտներից, վորը պետք է դրվի վարի վորակի բարձրացման հիմքում՝ առաջիկա բայլչիկայն գարնանացանին:

Ֆամանակին կատարած վարը բերքի բարձրացման դրամականն է:

Աշնան վարը պետք է անել բամբակահավաքը վերջաց-

նելուց հետո անմիջապես, նախորոք հավաքելով կողաճները և բամբակի ցողունները:

Եթե աշնանավարը լրիվ չի կատարվել, ապա վարը պետք է կատարել վաղ գարնան, նախապատրաստելով տրակտորային պարկը և ձիացիկան շարքերն այն հաշվով, վոր վարի ժամանակը հանելուն ոկտ անմիջապես կաղմակերպված ձևով նկավին այդ աշխատանքները:

Վարի խորությունը նույնական կարեսը նշանակություն ունի: Ինչպես վերը հիշեցնե՞ք՝ հետազոտությունները ցույց են տվել, վոր անցյալ տարի վարը տեղաւորվել է այնքան մասներեսորեն, վոր փիրացրած հողը հաղիվ բառ վարարել է մարկոսի թմբեր քաշելու համար և մարդի մեջ փիրացրած հող չի մնացել: Ուստի, ցանած սերմերը յերես են ընկել, կամ նույնիսկ բաց են մնացել, քամուց, արևից չորացել կորել են: Այլպիսի տեղերում սերմը չի ծլել, կամ ծլել են հատ ու կենտ:

Այդ անշուշտ, հետեւանք են նրա, վորի վարի խորության ու վորակի վրա բավարար ուշադրություն չեն դարձրել վոչ ՄՏ Կայանները և վոչ ել կոլտնտեսությունները: Աչքաթող և արվել այն հանդամանքը, վոր խոնավությունը սերմի ծլելու գլխավոր նախապարագանն է, դրա համար սերմը հողի մեջ պիտի ընկնի գոնե մինչև մի վերջոկ խորությամբ: Աշնան կամ վաղ գարնան կանոնավոր կատարված վարը պետք է ունենա 18–20 սմ. խորություն, վորակսղի հողի վերնաշերտում կուտակվի անհրաժեշտ խոնավություն և տերացիան կանոնավոր ընթանա. մի հանգամանք, վոր վճարկան նշանակություն ունի նոր ծլած և արմատակալվող մատադրամբակի առողջ զարգացման համար:

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԱԲ

Աշնան վարը վերջացնելուց անմիջապես հետո լավ բամբակագործը պիտի կատարի աշնան արաթ, այն ե՝ խոշոր կոշտերով վորած հողի վրա բաց թողնել այնքան ջուր, վոր

այդ կոչտերը ջուրը ծծեն իրենց մեջ։ Հետազոտմ այդ ջուրը հողի վարած շերտերում սառչում և ցրտահար և առ նում մոլախոտերի արմատները, հացնելով նրանց ուժզին հարված։ Նույն ցրտահարությամբ վոչնչացվում են դուրս ըրջված հողերի մեջ ձմեռող բամբակի մի շարք վնասառուները, իսկ ջուրը ծծած հողի կոչտերը փափկում և փիրառ նում են։

Աշնան արաթը, բացի վերոհիշյալից, ունի նաև այն առավելությունը, վոր ուշ աշնանը կամ ձմռան սկզբին ջուր ստանալ անհամեմատ հեշտ է։ Բացի դրանից, յեթե աշնանը, կամ ձմռան սկզբին հողը լավ և ջրած և հագեցված և ջրով, ապա դարձան նրա ունեցած խոնավությունը միանդամայն բամբական է, և կորոնտեսականը կարող է հողն ուղղակի վարել ու ցանել՝ առանց նախապես ջրելու, հետեւապես ցանքը չի ուշանա, վորովհետեւ ցանք անելը կախված չի լինի վոչ անձրևներից և վոչ ել ջրի հերթից, վորը դարձանը դժվարությամբ և ստացվում։

Անցյալ աշնան արաթի պլանը տրված եր 10.000 հեկտարի չափով, սակայն փաստորեն կատարվեց 750 հեկտար՝ որդ գործով զբաղվող կազմակերպությունների թույլ աշխատանքի հետևանքով։

Աշնան արաթը դարձանը վարկ և տալիս չվոչնչացված մոլախոտերի բուռն աճմանը և վաղ դարձանը դաշտը ծածկվում և մոլախոտերով։ Բամբակացանը հնարավորություն ունի կրկնավար անելով՝ հաջողությամբ պայքարել այդ մոլախոտերի դեմ, վոչնչացնելով նրանց ալիքի ջուռ, քանի արանք կիսեղեն բամբակի մատադ ծիլերը մինչեւ արմատակալելը և ամրանալը։

Այդպիսով, նախքան առաջին քաղանը, մոլախոտերը մեկ անգամ վոչնչացվում են, ուստի բամբակին սկզբից ևեթե հնարավորությունն և ստանում աղատորին աճելու։

Արաթի համար պետք է կատարել հողերի ընտրություն, վորովհետեւ կամ այնպիսի հողեր, վորուիդ արաթը բացա-

սական հետեւանքներ և տալիս։ Այսպես՝ արաթ չի կարելի անել չատ թեթև ավազային և ծանր կավացյին ուժությունները։

Եեթե հնարավոր չեւ աշնան արաթ անել, այդ գնալում պետք է անել գարնանը, կամ հողին տալ նախացանգային ջուր։ Գարնան արաթը պետք է այնպես դասավորել, վոր «քեշը» գալուց անմիջապես հետո հնարավոր լինի կրկնավար անել և ցանել։ Արաթի գործում ուշադրությունից չպետք է վրապի նաև վորակի խնդիրը։ Անհամապատասխան հողերի անկանոն, անվորակ արաթն իջեցնում ու բերքատվությունը։

Արաթ արվող հողամասը պետք է ունենա կանոնավոր հարթություն, հակառակ դեպքում՝ ինչպես մեր մի քանի շրջաններում կատարած արաթի փորձը ցույց է տալիս՝ պետք յեղած հարթությունից զուրկ դաշտերում արաթի ջուրը կուտակվում է փոսերում և ճահճանում։ Այդ լճացած ջրերն ուշ են չորանում, մինչեւ դաշտի ավելի բարձր մասերը վաղուց չորացած և նույնիսկ խոնավությունը կորցրած են լինում։

Այս ամենից պետք է խուսափի արաթ անող կալտնտեսական բարբակացանը, վորով և կապահովի իր դաշտի առատ բերքը, վորովհետեւ՝ ինչպես ասացինք՝ արաթը տընտեսում է ջուրը, հաջողությամբ պայքարում և վնասառուների և մոլախոտերի դեմ, թե՛ ձմռան ընթացքում վոչնչացնելով նրանց արմատները ցրտահարությամբ և թե՛ գարնանը զարկ տալով նրանց աճմանն ու, այսպիսով, հնարավորություն տալով միանդամից վոչնչացնել մոլախոտերը ցանքից առաջ։

Հայսնի յե, վոր բամբակի բերքատվության տեսակետից պետք է վաղ ցանք կատարել, վորի համար անհրաժեշտ է, վոր հողում վորոց ջերմությունը լինի։ Եեթե հողի մեջ այդ ջերմությունը հասնում է 15-16 աստիճանի, այդ բամբակի սերմի ծլելու համար հանդիսանում է առենա-

նպառապիսր չերժությունը։ Այն հողը, վոր արաթ չի ար-
կել, անհրաժեշտ և ջրել ցանելուց անմիջապես հետո (սապ-
սովար), իսկ այդ ջրով մենք իջեցնում ենք հողի ջերմու-
թյան աստիճանը։ Ջրելու հետևանքով իջեցված ջերմու-
թյունը թաց հողը վերականգնում է մի քանի որվա ըն-
թացքում, հետևապես այդ որերը կորչում են, ուշացնելով
սերմի ծելը և հետաքայում բամբակի զարդացման բոլոր
ֆագերը, վերջին հաշվով, կրնատելով նաև հասունացած
կնճուղների թելը, հետևապես և բերքը։ Այդ պատճառով
ել բերքառվության բարձրացման աեսակետից խոշոր դեր և
իսպում գարնան արաթը՝ ազատելով դաշտը ցանքից հետո
անմիջապես ջրելու հոգսից, հնարավորություն և տափս
պահպանելու հողի ջերմությունը, վոր անհրաժեշտ և սեր-
մի ժամանակին ծելը համար։

Բացի դրանից, ցանքից հետո ջուր տալուց (սոսպու-
վար) քեզ և գալիս, դաշտը չորանալիս, մանսավորապես
ծանր կավային և անբավարար մշակված հողերում, սուա-
ջացող կեղելը հաճախ լինում և այնքան չատ և պինդ, վոր
բամբակի ծիլերը չեն կարողանում հաղթահարել այդ կե-
ղեվի դիմաղրությունը, չեն կարողանում ծակել այն և
դուրս դալ, յիթե բամբակացանն ողնության չի հասնում
ժամանակին դաշտը փոցիսելով, և կեղեվը ջարդելով։ Այդ-
ովիսի դեպքերում ծիլերը վտանգվում են, կարող են մնալ
գետնի տակ և փոել, կամ ուշ ծելելով, մնալ թույլ, հետե-
վապես և ավելի յենթակա լինել հիվանդությունների։ Իսկ
յեթե քեզ տալը, կեղեվը ջարդելու աշխատանքներն ուշանան,
տպա գոյացած մաղանոթներով հողի մեջ յեղած խոնավու-
թյունը չուտով կշողիանա և սերմի ծելը կվտանգվի հողում՝
անհրաժեշտ խոնավության սակավության պատճառով։ Ա-
հա սապսուվարի այս բացասական կողմերը և արաթի այս
ստավելությունները պետք եւ աչքի առաջ ունենալով յու-
րաքանչյուր կոլոնտեսություն, չքամոր և միջակ գյուղացի,

լարեն իրենց բոլոր ուժերը՝ իրենց գաշտերն արաթի անելու։
լինի այդ աշնանը, կամ թեկուզ գարնանը։

1981 թ. ազգուծեռնարկումների պլանով աշնան առթիվ
նախատեսված եր 10.000 հեկտար։ Սակայն տեղերում այդ
աշխատանքը ժամանակին չնախաձեռնելու և, մյուս կողմեց
ել, ձյան անսպասելի շատ գալու պատճառով այդ պլանը
տապալվեց, ուստի մեր առաջ ամենայն լրջությամբ դրված
ե գարնան արաթի ինդիբը։

Գարնան արաթը, վորպես բայլչելիյան յերրորդ դար-
նանացանի հիմնական խնդիրներից մեկը՝ պետք ե կատար-
վի պլանով նախատեսված լրիվ չափով։

ԿՐԿՆԱՀԵՐԿ ՑԵՎ, ՓՈՑԽ

Աշնան վարած հողը գարնանը հակառակ ուղղությամբ
նորից պետք ե կրկնահերկ անել։ Կրկնահերկը կատարելիս
թեծ ուշադրություն պետք ե դարձնել վարի խորության
վրա, վարը պետք ե 6-8 մմ մեջ պակաս չլինի։ Այս չերտը
փափուկ և արելից տաքացած չերտ ե, նրա մեջ ծիլերը ժա-
մանակին են դռւրս գալիս, իսկ ավելի խորը վարած դեպ-
քում ծիլերն ուշանում են և յենթարկվում մոլախոտերից
խեղդվելու վատանդին։ Թե վորքան մեծ ե կրկնահերկի նշա-
նակությունը, այդ ցույց տվեց անցյալ տարվա փորձը,
յերբ Դուրդուղություն ըլջանի մի շարք գյուղերում, ինչպես
Արտաշատում, Մարգարյանում, Մոլլա-Բայազետում և այլ
չքանների մի շարք կոլտնտեսություններում, վորտեղ
կրկնահերկ չեր կատարելի, դաշտերը ծածկվել եյին մոլա-
խոտերով և բերք չեյին տվել։ Այդ դաշտերի վրա գործա-
դրած աշխատանքը ապարդյուն անցավ։

Կրկնահերկը կատարելուց հետո անհրաժեշտ ե զիգ-
զագ փոցիսով դաշտի մակերեվույթը յերկարությամբ և
լայնությամբ փոցիսել՝ նրան հարթելու և մոլախոտերի
մնացորդները հեռացնելու։ Համար։ Փոցխով հավաքված
մոլախոտերը և նրանց արժատները անհրաժեշտ ե դաշտից

քուրս տաճիլ և այսից: Արաթի դեմքում այս աշխատանքները պետք է ժամանակին կատարել, վորովեսլի դաշտը չըրանա այդ արաթի ջուրն իզուր չկորչի, ինչպես անցյալ գարնանն այլ տեղի ունեցավ մեր մի քանի շրջաններում, յեր Մ. Տ. Կայանները ժամանակին չկատարեցին կրկնաւորեկը, որինակ՝ թաղա գյուղում, Աղհամգարվում, Պատրաղաղվում և այլ գյուղերում:

ՊՈՐԱԾԱՑՈՒՄ

Քերքի բարձրացման համար, բացի հողի ռացիոնալ ժակությունից, մեծ նշանակություն ունի նաև պարարտացումը, մանավանդ բամբակացան շրջաններում, վորտեղ միենույն հողի վրա անընդհատ բամբակ ցանելով, մենք ամեն տարի բերքի հետ հողից վերցնում ենք նաև մեծ քանակությամբ սննդանյութեր, վորոնք անհրաժեշտ են նաև հետեւյալ տարվա բերքի համար: Ուստի, անհրաժեշտ ե հոգ տաճել հողից վերցրած սննդանյութերը նորից հողին վերադարձնելու մասին, հողի բերքատվությունը բարձրացնելու համար:

Հողի բերքատվությունը բարձրացնելու հիմնական միջոններից մեկը հանքային նյութերով պարարտացումն ե, վորին մեր ղեկավար մարմինները մեծ նշանակություն են տալիս: Բամբակի այս տարվա գարնանաշանի պարունակությունը կամ հանքային պարարտացնելու մասին նաև անընդհատ նախատեսնելու պլանով նախատեսնելու շատ հետաքար, վորն անցյալ տարվա պարարտացրած 8.900 հեկտար, վորն անցյալ տարվա պարարտացրած 14.000 հեկտարի հետ միասին կազմելու յէ 23.000 հեկտար հանքային նյութերով պարարտացրած հողեր այս տարվա ցանքերի համար, վորովհետև անցյալ տարվա պարարտացնութերի ազդեցությունը շարունակվելու յէ նաև այս տարի:

Թե ինչպիսի մեծ եփեկտ ե տալիս պարարտացումը մեր բամբակի գաշաերի բերքատվության բարձրացման գործում, ապացուցում են կունտակություններում և փորձա-

դաշտերում կատարված փորձերը, վորոնց արդյունքները փայլուն կերպով ապացուցեցին, թե վարքան մեծ է մեր բամբակացան շրջանների հողերի ֆուֆորային և ազոտային պարարտանյութերի կարիքը:

Հիշված փորձերը ցույց են տալիս նաև առանձին պարարտանյութերի գործադրությունից ստացած արդյունքները, բերքատվության բարձրացման աստիճանը: Այսպես, որինակ, կամլումով պարարտացումը վոչ մի եփեկտ չի տվել, նույնիսկ մի քանի տեղ նրա ազդեցությունը բացառական է յեղել: Ֆուֆորային պարարտանյութերի ազգեցությունը բամբակի բերքի վրա թույլ է յեղել, բարձրացնելու վ այն ընդամենը 11,4 % -ով (Տես. ընկ. Պ. Քարանթարյանի «Հանքային պարարտանյութերի կողեկիով փորձերի արդյունքները 1929 թ. Խորհրդային Հայաւոանում» աշխատությունը): Մոտավորապես նույն պատկերն են տալիս նաև Անդրկովկասյան Բամբակի Գիտահետազոտական Խնստիտուտի փորձերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԻՐԵՆց ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ Առաջին տեղն են բոնում, սակայն, յերբ ազոտային և լուսաբային պարարտանյութերը միասին ենք մտցնում, այդ գեղքում ստացվում է բերքի ամենամեծ բարձրացում, վորը հասնում է մինչև 30 % :

Ողտվելով ընկ. Քալանթարյանի վերև հիշված աշխատության տեղեկություններից, բերում ենք հետեւյալ շատ հետաքրքրական թվերը, վորոնք ապացուցում են, թե վորքան մեծ է հանքային պարարտանյութերի ղերը բերքի բարձրացման գործում: Այդ թվերը ցույց են տալիս շրջաններում կատարված փորձերի փաստական արդյունքները.—



Դիագրամ

Աղու
Քոսիոր

| Շրջաններ | Մեկ հեկտարի բերքը՝ ցենտ-ներով | | | | Բերքի հավել-լումը 0/0-ով | | |
|-------------|-------------------------------|--------|---------------|----------------------------|--------------------------|---------------|----------------------------|
| | Առանց պարագան. | Ազոտով | Ֆոսֆո- րով | Ազոտ և ֆոսֆո- միանին | Աղու | Ֆոսֆո- ուր | Ազոտ և ֆոսֆո- միանին |
| Հուրդուղարք | 8,71 | 10,84 | 9,99 | 12,02 | 24 | 15 | 38 |
| Զանգիբասար | 15,56 | 20,50 | 17,72 | 20,62 | 24 | 7 | 25 |
| Հրազդան | 14,06 | 18,27 | 16,33 | 19,35 | 30 | 16 | 37 |
| Եղմածին | 7,57 | 8,79 | 8,72 | 9,92 | 4 | 15 | 31 |

ԱՌԱՆՁԻՆ ԳՅՈՒԽԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՐՁԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

| ԳՅՈՒԽԵՐԻ | Մեկ հեկտ. բերքը՝ ցենտ-ներով | | | | Բերքի հավել-լումը 0/0-ով: | | |
|----------------------------------|-----------------------------|--------|---------------|----------------------------|---------------------------|---------------|----------------------------|
| | Առանց պարագան. | Ազոտով | Ֆոսֆո- րով | Ազոտ և ֆոսֆո- միանին | Աղու | Ֆոսֆո- ուր | Ազոտ և ֆոսֆո- միանին |
| Թափագյուղ (Հրազդա- նի շրջան) | 17,3 | 21,59 | 20,96 | 25,3 | 25 | 18 | 46 |
| Շահրեսը (Հուրդու- ղարք շրջան) | 6,69 | 8,65 | 8,05 | 9,29 | 29 | 20 | 39 |
| Զափարաբեկ (Հուրդ.) | 6,54 | 8,19 | 6,87 | 10,06 | 25 | 5 | 54 |
| Զիկրամլու (Համարլու) | 10,17 | 10,44 | 9,79 | 12,02 | 3 | 4 | 18 |

Համարյա նույն արդյունքներն են տվել Եղմածնում 1928 թվին և Հուրդուղարքում 1928 և 1929 թվերին դրված մասսայական փորձերը:

Հեռայի դիմքրամը ցույց է տալիս Եղմածնում 1928 թվին դրված մասսայական փորձերի արդյունքը հեկտարից:

Առանց
պարագան.




8,42 g.

Աղու



8,47 g.

Ֆոսֆոր




7,09 g.

Աղու
Քոսիոր




10,09 g.

Առանց
պարագան.




10,5 g.



14,4 g.

Ֆոսֆոր



12,6 g.

15,0 g.

այս արդյունքները մեզ պարզ ցույց են տալիս, թե պարաբանյութը, այն ել նրա ամենահաջող ձևը՝ աղոտի և ֆոսֆորի խառնուրդը ինչպես բարձրացնում է բերքը 30 %:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը մեր առաջ զբեկ և բնակատվության բարձրացման մարտական խնդիրը, վորի գլխավոր լծակներից մեկը Հանդիսանում է հանքային պարաբանյութը: Այս տարվա վերջին, Հարաբիլսայում պետք է պատրաստ լինի ցինամինիդի գործարանը, վորը տարեկան մեղ պետք է տա 18·000 տոնն պարաբանյութ: Գործարանը մեր դաշտերին կտա աղոտ և

տառնյակ վթերով կբարձրացնի բամբակի բերքատվությունը:

Յեկ յեթե մի շարք տեղերում հանքային պարարտանյութը ցանկալի արդյունք չի տվել, ապա այդ ունեցել ե իր առանձին պատճառները: Բացառությամբ այն հողերի, վորոնք, սարուկատուրան շատ քայլայված, ֆիզիկական հատկությունները կորցրած մինելու պատճառով, պահանջում են հիմնական բարելավումներ, վորտեղ զգալի ոգություն ցույց կտա առվույտի կամ մի այլ թիթեռածաղիկի կուլտուրան. մեծ ժամանք պարարտացման անհաջողությունները հետեւնք են այն բանի, թե կոլտնտեսականն ինչպես ե կատարել պարարտացումը, տվյալ գեպքում ինչպես ե յեղել նրա աշխատանքի վարակը: Այս գլխավոր մոմենտը, վորոնուշում և հետադա աշխատանքի ամբողջ եֆեկտը:

Ի՞նչ վորակի յէ յեղել պարարտանյութը և ի՞նչ ձեռվ ե այն մացվել հողը՝ ահա գլխավորը, վորը պետք ե պարզի անցյալի անհաջողությունը:

Տեղերում և կոլտնտեսություններում, պարարտանյութերին անփույթ և անխնամ վերաբերվելը, նրանց բացողյա, խոնալ տեղում թողնելը, նրանց թրջվելը պատճառ են հանդիսացել, վոր պարարտանյութը փչացել, քարացել և հետապայում չի տվել սպառված եֆեկտ: Շատ տեղերում փչացած, քարացած պարարտանյութն ստիպված են յեղել նորից ջարդել, ծեծել, հետո գաշտ տանել, վորսլիսի հանդամանքն աշխատանքը կրկնապատկել ե:

Մյուս կողմից պարարտացման անհաջողությունը հետևանք ե յեղել պարարտանյութի հողը մացնելու ձեմ, վորը մեր բամբակացանները շատ տեղերում անկանոն են կատարել, պարարտանյութը տեղ-տեղ համարյա կոչտերով են թափել, վորից մատաղ ծիլերն այրվել են, կամ այնքան քիչ պարարտանյութ են տվել, վոր նա վոչ մի աղղեցություն չի ունեցել:

Աչքաթող չպետք ե անել նաև պարարտանյութը մացնելու ժամկետը և քանակը:

Այսուղի միանդամայն պարզ ե, վոր պարարտանյութի վորակին ահագին գեր ե խաղում, ուստի խնամքով պահանձնարարտանյութը միայն կտա այն եֆեկտը, վորը մենք սպասում ենք: Միևնույն ժամանակ, պարարտանյութը հաղի մեջ մացնելիս պիտի վոչ թե անհավասար կուտակերով թափել, այդ հավասարաչափ, ինչպես շաղացան անելիս, և փոել դաշտի ամբողջ տարածության վրա:

Պարարտանյութը մացնելու համար տարբեր ժամկետներ կան:

Հաստ Անդրբամբ. Գիտ. Հետազոտ. Ինստիտուտի ավագաների, ամենանպատակահարմարն ե պարարտանյութը մացնել ցանքից առաջ «բացառությամբ սելիտրայի», այն ել կը կնաշ հերկից կամ վարից առաջ, վորովեազի հնարավոր մինի գութանով (նորմալ 8-20 սմ. խորությամբ) վարած պարարտանյութը լավ խառնել հողի մեջ: Արաթի գեպքում ել նույնական պես նպատակահարմար ե պարարտանյութը հողի մեջ մացնել արաթից առաջ:

Ի՞նչ վերաբերում ե քանակին, այդ կախված ե հողի հատկություններից, նրա այս կամ այն պարարտանյութի կարիքից: Հայաստանի հանքային պարարտացման ցանցն իր վորձերը զնում ե մեր ըլչանների տարբեր կետերում: պարզելու համար այս կամ այն հողի պահանջը պարարտանյութի տեսակի և քանակի վերաբերմամբ 14 տոկ. սուպեր-ֆոսֆատով և 20% սուլֆատ ամոնիումով պարարտացնելու դեպքում նպատակահարմար ե մի հեկտարին տալ 300 կիլո-գրամ առաջինից և 350 կիլոգրամ յերկրորդից, հարաբերությունը և դոզիբրովկան (չափը) փոխելով առանձին գեպքում, վորը կախված ե հողի քիմիական կազմությունից և պահանջից: Տեղերում այս հարցում պետք ե զեկավարվել ՄՏ Կայանների ազրոնոմի ցուցումներով:

Մի հանգամանք, վոր նույնական հակայական գեր ե խա-

զմամ պարարտացման եֆեկտի տեսակետով, այդ առաջին քաղհանը ժամանակին կատարելն է: Հողի մեջ մտցրած մննդանյութից սպազում են մոլախոտերը և արագ զարդանալով, ինդում են բամբակի մատաղ ծիլերը: Այս դեպքում պարարտացումը մասացական աղղեցություն և ունենում, և մի շարք տեղերում առաջն քաղհանի ուշացումն է յեղել պատճառը, վոր պարարտանյութը վոչ մի եֆեկտ չի տվել:

Ժամկետին կատարած առաջին քաղհանը գլխավոր նախապայմանն ե պարարտացրած դաշտից սպասված եֆեկտը ստանալու համար: Այդ հանդամանքը լավ պիտի հիշի ամեն մի կոլտնտեսական պարարտանյութը դաշտ մտցնելիս, այլապես նրա աշխատանքը ապարդյուն կանցնի:

ԱԿՈՍԱՅԻՆ ԶԵՎՈՎ ԶՐԵԼԸ

Յերբ հողը մշակված, փորխած ե, կարելի յել ձեռնարկել մարդեր կապելում: Մարդերի ձեւալորումը կախված է ջրելու ձեվից և մեխանիզացիայի ստորանից: Մեզ մոտ մեծ մասամբ տարածված են յերկու մետրանոց մարդերը, վորոնք ջրվում են վողողման ձեռվ: Այս ձեզի բացասական կողմերը շատ են: Մեր առաջ դրված ե այս ձեվի վերացման խնդիրը:

Ակոսներով ջրելը բամբակագործական փորձագիտական կազմակերպությունների կողմից արդեն ապացուցված ե և մասսայականացված Միջին Ասիայի հանրապետություններում:


Անդրյերկոմն իր սթ. նոյեմբերի վորոշումով առաջարկում ե այս տարի մեծ ուշադրություն դարձնել ակոսային սիստեմը մտցնելու վրա: Այս ձեռն այն ե, վոր նախորոք չեն մարկոսում և թմբեր չեն կապում: Շարքացան արած դաշտի ամբողջ տարածության վրա շարքերի արանքներում կուլտիվատորով նեղ ակոսներ են անցկացնում: Ջրելիս, ջուրն անցնում ե այդ ակոսիների միջով: Ակոսները մինում են 10-ից մինչև 26-27 ամ. լայնության: Ինչ-

պիս զկտեք, մարկոսը մեզնից տհագին ժամանակի և ծովականությունը: Ամենավերի շերտը, բերրի և լավ հոգի ուղարկում ե թմբեր կապելու համար: Ջրային պայմաններն ե լայնքան բարեհաջող չեն: Ջրելուց հետո մարզի ամբողջ մակերեսը, կեղեվակալում ե, վորի մեջ առաջազրած մարզանությունը ջուրն արագ գոլորշիանում ե: Բավական և այս դեպքում մի կամ յերկու որ կուլտիվացիան ուշացնել, և ջուրը կոլորշիանա: Այդպիսի դեպքերում հաճախ ջրի նշանակությունը կորչում ե: Բացի գրանից, այդ կեղեվը վերացնելու համար պահանջում են բավականաչափ բանվորական ձեռքեր: Իսկ կեղեւակալելն այս ձեռվ ջրելիս անխուսափելի յե, քանի վոր ջրի արագ հոսանքը փչացնում ե հողի Փիղիկական հատկությունը, քանդելով հողի կառուցվածքը, խախտելով աերացիան, զրկելով բույսի արմատները պահանջված քանակի ողից: Այդ հիման վրա յել հողի բիոլոգիական պրոցեսները շատ դանդաղ են կատարվում, և հողում աղոտը չի կուտակվում: Ակոսներով ջրելու դեպքում նախ՝ մենք աղատում ենք կեղեվակալումից և դրանից բղխող բացասական հետեւանքներից: Այստեղ կեղեվ առաջանում է միայն ակոսի մակերեսին, այդպիսով կազմելով ամբողջ տարածության 25-30 % միայն, և յեթե կուլտիվացիան այս կամ այն պատճառով ուշանում ե, ապա շատ քիչ ջուր և գոլորշիանում, կորչում: Ամենավատ պայմաններում ել ջուրը, ակոսներով ջրելու դեպքում, տնտեսվում ե հողի մեջ: Ջրելուց անմիջապես հետո բանվորական ձեռքերի այնպիսի ճգնաժամ չի ստեղծվում, ինչպես մարդերի գեղքում, յերբ ամեն մի ուշացած որը տալիս է ջրի ահապին կորուստ:

Հողի կառուցվածքը, նրա Փիղիկական հատկություններն այստեղ չեն քայլայվում, քանի վոր դանդաղ, բարակ հոսանքը, կամաց-կամաց թրչելով առնեն մի փոքր հողակոչություն և ծծվելով հողաչերտի մեջ հորիզոնական և ուղղաձիր ուղղությամբ, չի քայլայվում նրան, սորուկառուրան մնում է անխախտ, ոդային պայմանները բույսերի արմատների հա-

մար մնում են բարեհնպառ: Յեվ այս ձեւի մշակությունից
ավելի բարձր բերք և ոտացվում:

Զրի տնտեսման տեսակետից ել այս ձեն որվելի նոպա-
տակահարմար եւ Այս ձեռով ջրված 1,5 հեկտարի ջուրը
հավասար է մեր սովորական ձեռով ջրվող մեկ հեկտարին
տրված ջրի քանակին: Ուստի, կիրառելով ջրելու այս ձեզ,



Նկ. 1. Ալուսային ձեվով ջրելը

Ֆեր ունեցած ջրային պաշարով, հնարավոր կլինի ընդարձա-
կել բամբակի սարածությունը: Զրելու այս ձեզ հնարավո-
րություն և տալիս բամբակի համար ոգտագործել դդայի
թեքություն ունեցող հողամասերը: Նաև հնարավորություն
և տալիս լրիվ մեխանիզացիայի մշակման պրոցեսներն,
ինչպես ցանքից առաջ, նույնպես և ցանքից հետո:

Զրելու այս ձեզ մեծ հաջողություն կունենա մեր կու-
տնտեսություններում և խորհանուեառություններում:

Զրելու անինիկան բարդ չե: Զրելուց առաջ կուլտիվա-
տորով պետք է ակոսներ բաժել, ակոսների մեջ թողնել ջրի
թույլ հոսանք, այնպես, վոր ակոսը հանդարտ, հավասար
թրջվի, և յերբ հակառակ ծայրից ջուրը դուրս կգա, հո-
սանքը կարելի յե ամելացնել և ջուրը թողնել՝ ժամ: Այս
ձեսի ջրելը յերկար և տելում: Բայց նույն ժամանակամիջո-
ցում մի ջրվորը մեր սովորական մարդերի մի հեկտարի զի-
մաց կարող է ջրել 1,5 հեկտար, միանդամից ջուրը կապե-
լով միծ տարածության վրա և միայն հետեւ, վոր ջուրը
սովակները չքանդի: Ակոսի մյուս ծայրից դուրս յեկոդ
ջուրը կարելի յե ոգտագործել մյուս դաշտը ջրելու համար:
Նկատի ունենալով այս առավելությունները, Անդրբյերկա-
մըն իր վորոշման մեջ առաջարկում է մասսայականացնել
ակոսներով ջրելու ձեզ:

ՑԱՆՔԸ

Բամբակի բերքի բարձրացման գլխավոր գործոններից
մեկը ժամանակին կատարած և լավորակ ցանքն եւ:

Ցերք ցանքը ժամանակին և կանոնավոր և կատարված,
ցանածը տալիս և հավասար ծլած ուժեղ ծիլեր, վորոնք
արագ զարգանալով՝ հաջող սրայքարում են զանազան պա-
տահարների դեմ՝ հիվանդությունների, վնասատունների,
վատ յեղանակի, խոնավության պակասության և այլն, ու
զարգացնելով բամբականաշաբ կնդուշներ առատ բերք են
տալիս:

Ինչպիս կատարել բամբակի ցանքը: Այստեղ առաջին
նախապայմանն այն եւ, վոր սերմն ընկնի նովաստվոր պայ-
մանների, այն եւ վերեկում ցույց տված ձեվով մշակվող
հողի մեջ: Մենք տեսանք արդեն թե բերքատվության ինչ-
պիսի իջեցման պատճառ հանդիսացավ անցյալ տարվա հոդի
վատորակ մշակությունը: Ցերկբորդ պայմանը՝ սերմի վո-

բախն և Աերժացյլի համար պէտքական համունացում, եռոյթան ցրտահարությունը հավաքած սերմերը: Կարելոր և նաև սերմացիլի մաքրությունը, վոր աղջում և սերմի ծլու նակության վրա, ուստի ցանքի համար պետք ե տալ թելից լավ մաքրած, լինտերով անցկացրած սերմացու: Մի բան նույնպես չպետք ե աշխաթող անել, այդ այն ե, վոր սերմացիլի մեջ մասամբ խառնված են լինում նղմած սերմեր, վորոնք սովորաբար ծիւեր չեն տալիս, մասամբ ել մերկ սերմեր, վորոնք թեև առողջ ծիւեր տալիս են, բայց թելը լինում ե ցածրորակ ու կարճ, և պակաս բերեք և ստացվում: Ուստի, ցանքից առաջ անհրաժեշտ ե զտել սերմացուն՝ ձեռքով ջրկելով անպետք սերմերը: Զտած սերմը, վորակով բարձր սերմը ապահովում ե բարձր թերքառվուրյունը:

Մեր բամբակացան շրջանների անցյալ տարվա ցանքի փորձը պարզ ցույց տվեց, վոր ցանքի ուշացումը պատճառ հանդիսացալ համարյա 50 % պակաս բերք ստանալու: Սարդարաբարդի ՄՏ կայանի տվյալների համաձայն, Դուրգութուլիի շրջանի համար նշանակիլած ցանքի վերջին ժամկետին՝ մայիսի 10-ին, ցանքած ե յեղել միայն 4.000 հեկտար, այսինքն՝ պլանով նախատեսված տարածության 40 տոկոս: Մասսայական ցանքը վերջացել է մայիսի 25-ին, վորոշ տեղերում տեղելով նույնիսկ մինչև հունիսի սկիզբը, իսկ կրկնացանը շարունակվել է մինչև հունիսի 26-ը: Հիմնականում ցանքի սահմանված ժամկետը ձգձգվել է 20-25 որով: Այստեղ յերկարատև և տաք աշնան վրա հույս զնելը ժիանդամայն անթուլպատրելի յեր, քանի վոր յերկար տարիների փորձը ցույց ե տվել, վոր մեր բամբակացան շրջաններում աշնան ցրտահարություններ կարելի յե սպասել նույնիսկ հոկտեմբերի 25-ից: Մեզ մոտ մայիսին, մանավանդ հունիսին կատարած ցանքերը կորցնում են իրենց բերքի 50 %-ը, նույնիսկ ամելին, ուրեմն՝ ցանքի ամեն մի որվա ուշացումն առաջացնում ե բերքի զգալի կորուստ, մասականդ նավարոցկու ցանքի ուշացումը, վորովհետի նավ

լացիկն մեր սովորական կինդից 10-12 որով ուշ և հասունացնում: Այս հանդամանքի վրա անցյալ տարի ուշադրությունը չեն դարձրել և նավարոցկուն հատկացված հողամասերն ամենից ուշ են ցանքել: Որինակ՝ Շահրիարի յենթացրջանը, վորոտեղ ցանքը շարունակվել ե մինչև մայիսի 29-ը, կամ Վեդիի շրջանը, վորոտեղ նավարոցկու կրկնացանը կատարվել ե հունիսին: Բամբակը տաքություն սիրող բույս ե և նրա սերմերը ծլելու համար պահանջում են բավականաչափ ջերմություն:

Ցելսիուսի 15 աստիճան ջերմությունը պարունակող հողի մեջ ցանած սերմերը 5—6-րդ որը տալիս են հավասար ծիւերը: Ցելսի ջերմությունը պակաս ե, ծիւերն ուշանում են, ոկտոբերի 7 ոգևորդադյ 17-րդ դատությունը զգ յուսպի հիվանդությունների, ծննդը յերկու-յերեք շաբաթով ուշանում ե և սերմերի մի մասը փառում: Մյուս կողմից՝ շատ վաղ ցանելու դեպքում ծիւերը յենթարկվում են գարնան ցրտահարություններին:

Ինչպես վորոշել ցանքի ժամանակը: Բացի շերժաստիճանից, մի շաբաթ տեղերում գյուղացիք ցանքի ժամանակը վորոշում են և այլ նշաններով, որինակ՝ Միջին Ասիայում կարծիր կակաչի մասսայական ծաղկումը համարվում է հաստատուն տաք յեղանակների նշան, ինչպես և հողի լավ տաքությունը: Այդ ժամանակ գյուղացիք գիտեն, վոր ցանելու լավ ժամանակն ե:

Մեր պարմաններում բամբակի ցանքի ժամկետն սւսումնասիրված ե Գանձակի Սելեկցիոն կայանում՝ Հայաստանի հենակեաններում կատարած 2-3 տարվա փորձերով: Ուստի, ցանքի համար Հողդողկոմատի սահմանած ժամկետները՝ ապրիլի 20-ից մինչեւ մայիսի 10-ը՝ ապահովում են ցանքի ամենալավ ժամանակը: Ցանքը §* որից ավել չպետք ե տեղի, հակառակ դեպքում՝ բամբակի բերքին ցըրս տահարության վտանգ ե սպասում:

Ցանքի ժամանակը շատ կարծ ե, ուստի՝ բոլոր բամբա-

կացանները՝ թե խորհանաեսով թյունները, թե կոլտնտեսությունները և թե չքավոր, միջակ մենատնտեսներն այնպես պետք է դասավորեն աշխատանքները և իրենց ուժերը, վոր ցանքը վերջացնեն նշանակված ժամկետին։ Յանելով ժամանակին, մենք կտեսնենք լրիվ բերք, իհարկե, հետազյում լրիվ և կանոնավոր մշակությունը կատարելու պայմանով։

Մերմը պիտի պատրաստել նախորոք։ Բամբակի սերմը կարծր պատիճ ունի, վորը գանդաղեցնում և ծլելը։ Յեթե սերմը թրջված չե, լցնում են տոպրակների մեջ և մի կամ յերկու որ, ըստ հնարավորության, դնում հոսող ջրի, որինակ՝ առվի մեջ, իսկ յեթե հոսող ջրի մեջ չի դրված, իսրակավոր և ջուրը չուտուշում փոխել։ Մերմը յերկու որից ավելի չի կարելի թողնել ջրի մեջ, հակառակ դեմքում նա արագորեն ծլում ե, իսկ ցանելու ժամանակ այդ ծիլերը կկոտրվին և սերմը կփչանա։ Լավ թրջված սերմը պետք ե ուռչի և մատներով սեղմենիս միջուկը դուրս պրճնի։ Մեր բամբակացան շրջաններում ցանքը կատարվում և շարքացնով։ Դեռ անցյալ տարի մեր կոլտնտեսական, չքավոր և միջակ մասսաները համոզվեցին շարքացանի առավելությունների մեջ։

Ի՞նչ առավելություններ ունի շարքացանը։


Շարքացանը ցանքը կատարում և ուղիղ շարքերով, սերմերը հողի մեջ ընկնում են միմյանցից հավասար հեռավորության վրա և հավասար խորությամբ։ Անձեւներից հետո հողի կեղեվակալումը շարքացանի պայմաններում վոչ մի վտանգ չի ներկայացնում։ Սերմերից դուրս յեկած ծիլերը միահամուռ ուժերով նեղքում են հողի կեղեվը։ Նոսրացում կատարելը շատ հեշտ է։ Ուղիղ շարքերում բույսերի մեջ թողնվում է հավասարաչափ տարածություն։ Շարքացան դաշտի բուրը թիւրն իրենց զարգացման համար հավասար տարածություն ունեն, հավասարաչափ ապահոված են սնումնով, արեւի և լույսով։

Շարքացան արած դաշտում հնարավոր և մեխանիզացիայի յենթարկել նաև մշակման մյուս պրոցեսները, վօրը հեշտացնում և եժանացնում ե բամբակի ցանքի ինամքը։ Բացի դրանից, շարքացանը 40 %-ով տնտեսում ե սերմը, ժամանակը, հեշտացնում և աշխատանքը։ Շարքացան արած դաշտում միաժամանակ դուրս սյեկած ծիլերն արագորեն աճում են, ծաղկում, կնդուզներ կազմում և ավելի բերք տալիս, քան շաղացանի դեպքում և ստացվում ե վորակով ավելի լավ բամբակ։ Խնամքն ավելի հեշտ և աշխատանքն ավելի արագ և կատարվում։


Շարքացան արած դաշտում հեշտ և նաև պարքարել վնասատուների զեմ։ Շարքերով անցնելը և ծլծումը սրսկելն այնքան ել դժվար չե բամբակացանի համար, և այդ աշխատանքը ապարդյուն չե անցնի։

Մեզ մոտ ընդունված ե Եվերի, Անկորդ և Արմալիս սիստեմի շարքացանները։ Իրենց կառուցվածքով բամբակիշարքացանները շատ տարբեր են լինում, բայց բոլորն ել ունեն հետեւյալ գլխավոր մասերը։ անկիներ ունեցող շրջանակի վրա տարացրած ե յերկաթյա արկղ սերմացվի համար։ Արկղի հատակի վրա գտնվում ե դուրս ձգող ապա նկ. 2. Արկղի սիստեմի շարքացանը, վորն այսպես է հարմարեցրած, վոր ըստ ցանկության կարսդանու ցանել շատ կամ քիչ։

Արկղին ներքենից հարում և սերմ անցկացնող խօսքավարքը, վորի ծայրին խոփ և կցված։ Խոփը, զործիքը շարք



վելու ժամանակ, քիչ բարձրանում ե հողը և նույն միջոցին սերմերն ընկում են անհրաժեշտ խորության մեջ։ Շարքացանով ցանք անելիս անհրաժեշտ և ուշադրություն դարձնել շարքերի հավասարության և ցանքի խորության վրա։ Անցրալ տարվա ցանքը յեղել և շատ անվորակ ։ Ցանքը կատարվել և անհավասար շարքերով, ամբողջ շարքեր մնացել են չը ցանված։ Այստեղ, բացի վարի անվորակությունից, մեծ նշանակություն ե ունեցել նաև անասունների ուժառապա-



Ֆի. 3. Մի շարքացանի շարքացանը (Եվերի գործարանի սությունը՝ կերի պակասի հետևանքով, ինչպես և ցանք անողների անվորակ լինելը)։

Վոչ պակաս նշանակություն ունի նաև ցանքի խորությունը, վորպիսի հանդամանքը շատ տեղերում անուշադրութան են մատնել կոլոնածեսությունները։ Հաճախ կարելի յե հանդիպել կամ շատ խոր կատարած ցանքի, վորի հետևանքով ծիլերը դժուզա են յեկել դեղին և վախտ, հետև վապես յենթակա հիվանդությունների և անընդունակ առողջ բույսեր առաջու, կամ յերես կատարվուծ ցանքերի, վո-

րպես սերմերն աւաշվին անդամ ջրելիս քչվել, տարվել են, վորով և պետք և համախ բացատրել մեր բամբակի դաշտեարում նկատված բացուտները։ Այսպիսով, մի հեկտարի վրա դաշտաված բույսերի նորմալ թիվը շատ քիչ և յեղել, հետեւ վագես և շատ քիչ բերք և ստացվել։ Ահա անցյալ տարվա այս բացերն են, վոր ստիպում են մեղ մեր ուշադրությունը բնվեռել բամբակի մշակության բուլոր պրոցեսների վորակի վրա։

Բայց կերպության յերրորդ դարնանացանը պետք և ապահովել լծկան անասուններով և կերով, վորպեսզի ցանքի ժամանակ չկանոնենք անցյալ տարվա անհաջողության առաջ, յերբ ցանքի աշխատանքները զարդարում ելին լծկան անասունների ուժապառության պատճառով, կամ անխնամ վերաբերմունքի հետևանքով։ Յուրաքանչյուր կորոնտեսական պիտի լավ իմանա, վոր նա գարնանացանի համար պարտավոր և ունենալ բավարար քանակությամբ կեր, վորպեսզի կաղմակերպած ձիայեղային խմբերը տրակտորների հետ հավասարապես աշխատեն և ավարտեն ցանքը պահանջված ժամկետներին։

Մյուս կողմից՝ շարքացաններն աշխատանքի պիտի տանել պատրաստված կաղըերով, ամբողջ ուշադրությունը կենարոնացնելով աշխատանքի վորպակի վրա, կանոնավորել շարքացանն այնպես, վոր սերմերն ընկնեն հալասար խորության խոնավ հողի մեջ, վորն ապահովում է սերմերի միաժամանակ և հավասար ծլումը։

Սերմը հողի մեջ դցելու ամենահաջող խորությունը պետք և համարել 4-5 սմ., թեև վորոշ դեպքերում այդ խորությունը կարող է փոխվել, նայած հողի տեսակին և խոնավությանը։ Որինակ՝ արաթի զետքում խորությունը պիտի մինի 5-6 սմ.։ Վորպեսզի շարքերի հավասարությունը պահպանվի, շարքացանի մարկուրը նշանակում է շարքերը։ Անհրաժեշտ և ստանալ ուզիղ շարքեր, վորպեսզի հետադա-

յում հեշտ լինի միջարքային մշակությունը։ Շարքացան-ների մարդկությ մեծ մասամբ դիսկավոր ե լինում։

Տրակտորային ցանքի համար կարելի յէ գործածել 2-3 շարքացանի մեքենաներ, ամրացնելով նրանց մի ընդհանուր չքշանակի վրա։ Ցեթե շարքացաններն ամուր ամրացրած չինեն, յերբեք չի կարելի հավասար շարքեր ստանալ, իսկ անհավասար շարքերի դեպքում կդժվարանա միջարքային մշակությունը։

Եերկարքանի մեքենայով և տրակտորով աշխատեցնելու դեպքում որական կարելի յէ ցանել 10 հեկտար, սակայն այդ արտադրողականությունը կախված ե նաև հողի մշակված մինելուց, դաշտի տարածությունից և այլ պայմաններից։

Բայլշնիկյան յերրորդ գարնանացանին տրակտորային ուժով կատարված ցանքը պետք ե կազմի կոլտնտեսությունների ամբողջ ցանքի տարածության 25, իսկ խորհությունների՝ 50 տոկոսը։

ՄԱՐՏԱԿԱՆՈՐԾԵ ԴԻՄԱՎՈՐԵՆՔԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՑԱՆ ՅԵՐՐՈՐԴ ԳԱՐԱՆԱՑԱՆ

...«Մեր՝ աշխատելու կամքը, նոր ձեզով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը նորանոր հաղթանակի դրավական են» (ՍՏԱԼԻՆ)։

Համկոմկուսի սեպտեմբերի 31-ի վորոշմամբ այս՝ 1932 թվի բայլշնիկյան յերրորդ գարնանացանին Հայաստանի բամբակացան չքշաներում պիտի ասկահովվի 30 հազար հեկտար բամբակի ցանք։ Անմիջապես կատարելով մեղ առաջարկած ազրումպեկար, պետք ե տպահովենք 30 հազար հեկտ. բամբակի արածության ցանքը, վարից 500 հեկտար մինելու յէ սածիւսվար բամբակ։ Այդ ամենը մեր գործարանների տալու յէ 27.900 տոնն բամբակ։

Այս խնդրի իրականացումը պահանջում է մասսաներին լայնութեն մորիթվացիայի յենթարկել, կազմակերպել նրանց գլխավորել նրանց ակտիվությունը։

Երջանային կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպություններն ու որդանները պետք ե լրացն մասսայական աշխատանք ծավալեն պլանների իրականացումն ապահովելու համար, հարցածելով պլանները չկատարելու աջ ուղղությունիստական տենդենցները, շտագ կերպով պլանները կոնկրետացնելով և հասցնելով գյուղ, կոլտնտեսությունն կուլակներին և ունկորներին պետք ե տըրպեն կայում առաջադրանքներ։

Նախապատրաստական աշխատանքների լնիվացքում մեր ուշագրությունը պետք ե կենտրոնանա կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական և քաղաքական ամրացման վրա, ել ավելի զարգացնելով այդ կոլտնտեսությունները և 1932 թ. բամբակագործական չքշաններում չիմնականում ավարտելով համատարած կուեկտիվացումը, նրա հետման վրա կուլակությունը վերացնելով իրեն դասակարգի Պետք ե ագրոտիկներիկան լաճն ողնություն ցույց տալ կոլտնտեսական արդֆինավլումները կազմելու դործին, այդ պըլանները չիները չինածել սոսկ թվական տվյալների, այլ ուշադրություն դարձնել աշխատանքի լավ կազմակերպման վրա, արմատացնել գործավարձը, վերացնել գիմազրկությունը, մըրշակել աշխատանքի նորմաները՝ յենելով բավարույն հարվածայինների արտադրանքից։ Բայլշնիկյան 3-րդ գարնանացանը կազմակերպելու համար մեծ և վճռական տեղ ե տրվում Մ. Տ. Կայաններին։ «Մ. Տ. Կայանների աշխատանքների ներկայական միասնական մեջ, վորոնք խորհութեանունների հետ միասին հանդիսանաւ են սոցգյուղատնտեսության առաջավոր ջուկաները, պետք ե մացնել շտագ վճռական չքշադրած կուլտնտեսությունների կազմակերպական և անաթեսագրադարձական ամրացման գործում» (Անդրյերկոմի վորոշումը)։ կան ամրացման գործում»

Մ . Տ . Կ . կոլտնամսաւթյունների աճման և ամրացման գործությունների հանդիսանալով հաստատուն տեխնիկական բազա, պետք ե հիմնականում զեկավարեն վոչ միայն աշխատանքի տեխնիկական կողմը, այլև պետք ե հանդիսանան կոլտնամսական արտադրության խսկական կազմակերպիչները և զեկավարները, պայքարելով վորակական բարձր ցուցանիշների համար»:

Պատրաստվենք մարտականորեն դիմավորելու բայլշելիկյան յերրորդ գարնանացանը: Անհրաժեշտ ե ուժեղ թափ հաղորդել գյուղղործիքների, մեքենաների և տրակտորների վերանորոգման աշխատանքներին, այն հաշվով, վոր վարի մոմենտին արակտորային պարկը միանգամայն պատրաստվնի աշխատանքները բայլշելիկյան կատարելու համար:

Տրակտորային պարկի լրիվ ոգտագործման հետ միասին անհրաժեշտ ե կազմակերպել կենդանի քաշող ուժի լրիվ ոգտագործումը: Վոչ մի թշկան գարնան վարի և ցանքի յետուն աշխատանքների ընթացքում անդործ չպիտի թողնել: Զերոյեղան խմբերի աշխատանքը պետք ե զուգադիպի տրակտորի աշխատանքներին: Այդ պետք ե գիտակցի յուրաքանչյուր կոլտնտեսական, յուրաքանչյուր միջակ և չքավոր գյուղացի՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով և ինսամելով իր լիկան անասուններին:

Բացառիկ նշանակություն պետք ե տալ ջրատնտեսական աշխատանքներին, գարնան վոռոգման համար կարգավորել ջրային ցանցը, ամրացնել գետերի ափերը, կարդավորել և մաքրել առուները, այդպիսով ապահովելով գարնան արաթի աշխատանքները:

Այս բոլոր աշխատանքներում, ինչուս և վարի ու յանքի աշխատանքներում պետք ե լայնորեն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը ընկ. Սաալինի Յ ցուցումների հիման վրա, լայն կերպով կիրառելով դործավարձը, մացնելով անտհաշվարելը, բոլոր ողակներում վերացնելով դիմա-

դրկությունը, սկսած Մ . Տ . Կ . այսանի դիրեկտորից մինչև վերջին կոլտնտեսականը, չքավոր և միջակ գյուղացին պատասխանատու դարձնելով իրեն հանձնված գործի համար, միշտ նշանաբան ունենալով պայքարը բարձր վորակի համար: Պետք ե միշտ հիշել, վոր «մեր արտադրական պլանները սույն թվերի աղյուսակներով և առաջադրանքներով չեն սահմանափակվում: Արտադրական պլանն իրոք հանդիսանում ե միշտոնավոր մարդկանց կենդանի և պրակտիկ գործունեյությունը: Մեր արտադրական պլանի իրական լինելը՝ նոր կյանք կերտող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի իրական լինելը կենդանի մարդկի են: Մենք ենք ձեզ հետ, մեր աշխատելու կամքը, նոր ձեռով աշխատելու մեր պատրաստակամությունը, պլանը կատարելու մեր վճռականությունը»: (ԱՏԱԼԻՆ)

Եեվ յեթե մենք ասենք, վոր ունենք այդ վճռականությունը բայլշելիկյան այս յերրորդ գարնանացանին, «Հետեւապես մեր արտադրական ծրագրը կարելի յե իրականացնել և պետք ե իրականացվի»: (ԱՏԱԼԻՆ)

ՀՀ Ազգային գրադարան



NL0280623



19.117

